



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 1 ՄԱՅԻՍ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 20


ԱՂՈԹՔ ԹԱԳԱԽՈՐԻՆ ՀԱՄԱՐ

Տէրը թող լսէ աղօթքներդ, երբոր անձկութեան մէջ ես.
մեր հայրերուն Աստուածը ինք թող պաշտպան ըլլայ քեզի:
Քեզի օգնութիւն թող ղրկէ իր սրբարանէն, եւ Սիոնէն քեզ պօրացնէ:
Տէրը թող յիշէ քու նուէրներդ, եւ կոհերդ ընդունելի համարէ:
Տէրը սրտիդ համեմատ թող տայ քեզի,
եւ քու բոլոր փափաքներդ կատարէ:
Մենք քու բերած փրկութեամբդ պիտի ցնծանք,
եւ Աստուծոյդ յաղթանակին դրօշը պիտի կրենք:
Տէրը կատարէ բոլոր խնդրանքներդ:
Հիմա գիտցայ որ Տէրը կը փրկէ իր օծեալը.
անոր աղօթին պատասխան կու տայ իր սուրբ երկինքէն,
եւ իր պօրութեամբ անոր մեծամեծ յաղթանակներ կը պարգեւէ:
Ոմանք իրենց պատերազմի կառքերուն, ուրիշներ ձիերու կ'ապաւինին,
բայց մենք Աստուծոյ՝ մեր Տիրոջ կ'ապաւինինք:
Անոնք պիտի ծունկի գան եւ իյնան,
մինչ մենք կանգուն պիտի մնանք, գլուխնիս բարձր:
Ով Տէր, փրկէ թագաւորը. երբ քեզ կանչենք՝ պատասխանէ մեր աղօթքներուն:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ եւ հովանի լիցի ի վերայ իմ՝ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ եւ արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ

ՅԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԲՕՐ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ
5:12-13

ՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ (5:12)

Հեղափոխականորեն 5:7-12 այս բաժինը Յակոբոս Առաքեալը կը խօսի համբերության մասին եւ օրինակը կը բերէ Յոբի համբերության, մանաւանդ երբ նեղության մէջ է հաւաքացեալը:

Այսպէս կ'ըսէ. «**Համբերող եղէք, եղբայրներ, մինչեւ Տիրոջ գալուստը**» (7 հմբ), ինչպէս մշակը համբերութեամբ կը սպասէ: «**Իրարու դէմ մի՛ րրպնջաք, եղբայրներ, որպէսզի Աստուծոյ դապաստանին չենթարկուիք, որովհետեւ ահա Դատարարը գալու վրայ է**» (9 հմբ): Ի վերջոյ, «**եղբայրներս, բնաւ երդում մի՛ ընէք, ո՛չ երկինքի, ո՛չ երկրի եւ ո՛չ ալ ուրիշ ոեւէ բանի վրայ: Պարզապէս ձեր Այոն Այո թող ըլլայ, եւ Ոչն՝ Ոչ, որպէսզի չըլլայ որ դապաստարութեան ենթարկուիք**» (12 հմբ): այս վերջին բաժինը ուիրշ բան չէ եթէ ոչ Քրիստոսի ուսուցումը (Մտք 5:33-37): Այսպէս Յակոբոս Առաքեալ կը զգուշացնէ, թէ ինչպէս օգտագործել լեզուն, որովհետեւ վերջ ի վերջոյ, այդ Այոն եւ Ոչը լեզուով պիտի ըսուի, որուն մասին Առաքեալը նոյն այս նամակին 3-րդ գլխուն մէջ խօսած էր լեզուին սանձ դնելու մասին, ու անոր օգտագործման մասին: Ուրեմն մի՛ րրպնջաք, որպէսզի դապաստանի չենթարկուիք, երդում մի՛ ընէք, որպէսզի չդապաստարուիք: Այլ, ճշմարտութիւնը ըսելու, ու մանաւանդ՝ նեղության ու հալածանքի մէջ Տիրոջ անունը գուր րեղ չգործածելու: Քրիստոսի աշակերպին կոչումն է ճշմարտութիւնը ըսել, եւ ոչ թէ խափել:

ԱՂՕԹՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ (5:13)

Նամակի սկիզբին Յակոբոս Առաքեալ խօսած էր զգուշացուցած էր, որ հաւաքացեալները երջանիկ ըլլան երբ զանազան փորձութիւններու մէջ կ'ինանք, որովհետեւ փորձութիւնը համբերութիւն կը ծնի, եթէ հաւաքը փորձին դիմանայ (1:2-3): Ահա այս կացութեան մէջ ինչ ընելու ենք եթէ ոչ աղօթելու եւ Աստուծմէ իմաստութիւն խնդրելու, ըստ այնմ րեսնելու թէ ինչ բանով կ'անցնինք, րեսնելու կեանքի դրուածքը, հասկնալու այս բոլորին իմաստն ու նպատակը: Այս հատուածով արդէն կ'եզրակացնէ ամբողջ նամակը, երբ սկսած էր խօսելու այս նամակին ճամբով համբերութեան մասին, հարաբերութեան մասին, ու մանաւանդ անհրաժեշտ իմաստութեան մասին, որ եթէ չունի, թող խնդրէ Աստուծմէ (1:5):

Յակոբոս Առաքեալ այս հատուածով կը ներկայացնէ թէ որքան երջանիկ է այն անձը, որ ամբողջութեամբ Աստուծոյ հոգաբարութեան կը յանձնուի, եւ ուրախութեամբ կ'ընդունի Աստուծոյ կամքը ու անոր կարարումը: Ահա այսպէս Յակոբոս Առաքեալ գործնական երեսները կը յայտնի կեանքի: Երբ հարց կու րանք, ո՞վ նեղության մէջ է: Ո՞վ ուրախ րրամաղորութեան մէջ է: Ո՞վ հիւանդ: Ո՞վ մեղքի մէջ է: Ո՞վ մոլորած է:

«**Ձեզմէ մէկը նեղության մէջ է՝ թող աղօթէ**» (13 հմբ): Նեղութիւն ըսելով ի՞նչ կը հասկնանք: Յաճախ րարբեր րեսակի նեղութիւններ կան ու կրնանք ունենալ: Ինչպէս Քրիստոս ալ պիտի յիշեցնէ, երբ կ'ըսէ «**նեղութիւններ պիտի ունենաք**»: Նեղութիւն գործի, անգործութեան, առողջութեան: Բայց ընդհանուր շրջագիծին եթէ նայինք Յակոբոս Առաքեալ 5:10 մէջ պիտի ըսէ. «**նեղութիւններու մէջ համբերելու օրինակ առէք մարգարէներէն, որոնք Տիրոջ անունով խօսեցան**»: Ահա այսպիսի նեղութեան պարագային ինչ կ'ըլլայ բնական արքայապարտութիւնը մեր, դժգոհութիւն, յուսահատութիւն, րրպունջք: Իսկ ինչ կ'ըլլայ գերբնական արքայապարտութիւնը հաւաքացեալին, աղօթելու Աստուծոյ, որպէսզի անհրաժեշտ իմաստութիւնը րրուի իրեն: Ահա հոս է ճշմարիտ ու վաւերական հաւաքը, երբ կը փորձուի ու նեղության մէջ է պէտք չէ փլուզուի, ընդհակառակը, պէտք է շարունակէ, առաւել եւս երջանիկ գգայ: Որովհետեւ Աստուած յարուկ նպատակ ու ծրագիր ունի ամբողջացնելու: Ի՞նչ ընել: Աղօթել: Աղօթել Աստուծոյ որպէս երկնաւոր Հօր, որ ամբողջական վաւահութեամբ իբրեւ զաւակ Իրեն կը դիմէ: Բայց յաճախ երբ նեղության մէջ ըլլանք, ընդհակառակը աղօթել չենք կրնար, կամ չենք ուզեր:

Հասկնալի վիճակ է: Յաճախ կ'ըսենք բառեր չունինք աղօթելու: Հասկնալի է: Տրամադրություն չունին: Հասկնալի է: Այդ պարագային կարելի է ուիրշներու բառերը օգտագործել: Սաղմոսի, ուրիշ աղօթքները, որոնք ուղղությունը կու փան, յոյս կը ներշնչեն, կը քաջալերեն: Ահա այս կացութեանց մէջ է որ Չարը ինք գիտէ, որ նուազ կարիքը կը զգամ այսպիսի պարագաներուն աղօթելու, մինչ այդ առաւել կարիքը ունիմ աղօթելու: Խորքին մէջ ոչ թէ բառեր չունինք աղօթելու, այլ ինչպէս օգտագործենք այդ բառերը: Ընդհակառակը, մօտենանք Աստուծոյ ողորմութեան Գահին, եւ Իրմէ խնդրենք եւ ըսենք նեղութեան մէջ ենք օգնէ մեզի, ողորմութիւն գրնելու եւ շնորհք: Հեղափոխական որ Յակոբոս Առաքեալ պարզ եւ յարակ կ'ըսէ. «Նեղութեան մէջ եւ աղօթէ»: Այդչափ: Բայց արդեօք կարելի չէ, եւ անոր սպասում ունինք, որ Յակոբոս Առաքեալ շարունակէր ըսելով. «Աղօթեցէք եւ պիտի ստանաք, պիտի ազատիք, պիտի կարարուի»: Ընդհակառակը, նեղութիւն, աղօթք, նեղութիւն: Այս է իրականութիւնը: Ուրեմն քրիստոնէայ հաւաքացեալը այսպէս աղօթելու է, ինչպէս Քրիստոս Ինք աղօթեց. «Հեռացուր այս բաժակը, բայց եթէ քու կամքդ որ խմեմ, թող որ խմեմ» եւ ամբողջութեամբ կը վստահիմ քեզի: Երբ կ'աղօթենք մեր նեղութեան մէջ, որ Տէրը ազատէ մեզ, կրնայ ԱՆոր պարասխանը ըլլալ, քեզ չեմ ազատեր, բայց քեզ կը զօրացնեն: Ահա հոս է զԱստուած ճանչնալու առիթը, որ Ինք գիտէ թէ ինչ վիճակի մէջ եմ, միայն թէ ամբողջական հաւաքքով Իրեն դիմելու եւ Իրմէ խնդրելու:

«Ուրախ փրամադրութեան մէջ է՝ թող գոհաբանական երգ երգէ Աստուծոյ»: Ուրախ փրամադրութիւն ըսելով, կրնանք հասկնալ եւ լաւ եւ վատ ժամանակներու ընթացքին: Ընդհանրապէս ուրախութիւնը որուն մասին յաճախ կը մտածենք, այն չէ ինչ որ Առաքեալը կը ներկայացնէ այսպէս: Յակոբոս Առաքեալը կը ներկայացնէ որպէս քաջալերում, նոյնիսկ նեղութեան մէջ, Աստուծոյ գոհաբանական երգ երգել, եւ ոչ թէ դժգոհիլ, փրփնչալ: Ահա այս նախադասութիւնը շար աւելի մտածելու առիթ կու փայ, քան առաջինը: Որովհետեւ առաջինի պարագային մի գուցէ աղօթեմ, բայց երկրորդի պարագային որքանով պարտասար եմ Աստուծոյ գոհաբանական երգեր երգելու երբ ուրախութեան մէջ եմ: Որովհետեւ յաճախ այդ վիճակին մէջ կրնամ մոռնալ զԱստուած: Ահա այս վրանգին դիմաց է որ Աստուած զգուշացուց Իր ժողովուրդը երբ կը պարտասարուէին խոստացում երկիր մուտք գործելու, «**Զգոյշ կեցիր, որ չլլայ թէ քեզ Եգիպտոսի երկրէն, ծառայութեան փունէն հանող Տէրը մոռնաս**» (Բ Օրինաց 6:12): Քրիստոս նոյն օրինակը կու փայ երբ Սերմնացանի առակով կը ներկայացնէ Աստուծոյ արքայութիւնը, երբ կեանքի հոգեսերը եւ հարստութեան հրապոյրը կը խեղդեն Աստուծոյ խօսքը (Մտթ 13:22): Ընդհանրապէս երբ ուրախ ենք յաճախ կ'երգենք, բայց այս պարագային պարզ երգի մասին չէ խօսքը, այլ գոհաբանական երգեր երգելու, այսինքն՝ զԱստուած փառաբանելու, Անոր շնորհակալութիւն յայտնելու: Ահա այն արեւն է որ երբ մարդիկ փեսնեն որ այդ ուրախութեան մէջ զԱստուած է որ կը փառեբանուի եւ ոչ թէ մեր անձերը, այն արեւն մարդիկ կը նշմարեն որ մենք փարբեր ակնոցնով կը դիտենք եղածները, ինչո՞ւ: «**Որովհետեւ կ'ուզէ որ մենք իր նոր սրտեղծագործութեան առաջին պտուղները ըլլանք**» (1:18):